



ՕՐԱԳԻՐ ՏԱՍՆՕՐԵԱՅ

Կը հրատարակուի Ամսոյն 10ին 20ին եւ վերջին:
Տարեկան գինն է 100 դանեկան ԿԱՆԽԻԿ:
Վեցամսեայ „ 60 „
Ուզողը կրնայ ստորագրուիլ, Պօլիս Զեննիքի խանը վերի
յարկը Թ. 4-5 Խմբագրի սենեակը:
Ստորագրութիւնները ամեն ամսու 1ին կսկըսի:

Երկրորդ րրգանին ամբողջ 18 քիւր ուզողը 50 դանեկան
պիտի վճարէ:
Անձնական շահու մը համար ըլլալու ծանուցմանց հա-
մեմատաբար սակարկութիւն կըլլայ:
Ո եւ իցէ նամակ եւ գրութիւնք Խմբագրին պիտի ուղ-
ղուի:

30 ՅՈՒՆԻՍ

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ 1861

ԹԻՒ 33

ԵՐՈՒՍԵՂԻՄԵՅ ԽՆԴԻՐ

ԿԱՐ

Ս. ՅԱԿՈՎԼԵԱՅ ՎԱՆՔ

Յայտնի է Ազգիս ողջամիտ եւ աւանդապահ
մասին թէ՛ այս խնդրոյն ծագումէն ՚ի վեր, Ա-
րեւելեանը որքան զգուշութեամբ եւ խոհեմա-
բար վարուեցաւ, եւ կարծեմք քիչ մ'ալ չափն
անցուց: Թէպէտեւ ուրիշ Հայ օրագիրներ՝ ու-
մանց թելադրութեամբը առանց ետին առջին
նայելով յիշեալ խնդրոյն վրայ սաստկաբար յար-
ձակեցան, եւ չափէն աւելի ու իրենց սահմա-
նէն դուրս խօսեցան, գրեցին ու հրատարակե-
ցին. բայց ըստ մեզ բոլորն ալ նախապէս այն Ա-
ռաքելական պատուով մեծարեալ Ս. Աթոռին
դիմաց աններելի յանցաւոր, եւ յետնապէս Ազ-
գին մէկ խիստ մեծ մասին առջեւ դատապարտ-
եալ համարեցան. եւ միշտ պիտի համարին՝ եթէ
ըրա՞ծ սխալմունքնին ճանչնալով հրապարակաւ
յետո չի կոչեն. եթէ ոչ պէտք է խորհին սա
ռամկօրէն առածը թէ՛ « Խտրամանին ոչխարը՝
ի վերջոյ կ'ելլէ խաղը »:

Ասոնք այսպէս գիտնալով՝ անհրաժեշտ կեր-
պիւ պարտ է մեզի որ այս անգամ Արեւստղէմի
Ս. Յակովբայ Ա. անքին վրայօք քանի մը բա-
ցատրութիւններ տանք, որոնցմով զրեթէ 6—7
ամիսէ ՚ի վեր, նոյն տեղւոյն Պատրիարքի ընտ-
րուե համար անակնունելի կերպիւ յառաջ եկած
ցաւալի խնդրոց մէջ յիշեալ Ս. Ա. անքին դէմ
ինչքան սխալեւնին, եւ հետեւաբար որքան մե-
ղանչեւնին՝ թէ այն Հայ Օրագրաց, եւ թէ ա-
նոնց թելադիր եղող մէկ քանի Ընձանց՝ բարե-
կամաբար իմացընեմք. եթէ այս առաջին խօս-
քերնիս ծանր կը թուի իրենց, կը խնդրեմք որ

իրենք ալ առաջնապէս սակաւիկ մի ներողամիտ
եւ համբերող ըլլան, զի յուսամք թէ ասկէ ետքը
տալու բացատրութիւններնիս այն առջեւ ըսած
ներնուս ծանրութիւնը թեթեւցընելով, իրենք
ալ ամեն կերպիւ համոզուին թէ՛ ըրածնին Ար-
րօնքի եւ Ազգի նկատմամբ ամբթ եւ անվայել
բան մըն էր, եւ հետեւաբար երկու սրբութեց
դէմ մեծ անարգանք եւ նախատինք Տես-
նենք այնպէս է:

Արդ այսօրուան օրս Արեւստղէմի Հայոց
Ա. անքը, նախ՝ իւր սարգն է Քրիստոսի Աե-
նարարին մերոյ բազում սուրբ եւ հրաշալի Տը-
նօրէնութեանց յիշատակարանը. (տես պատմ.
Ս. Տեղեաց, Տպեալ Արեւստղէմ, ՚ի Ա. անս
սրբոյն Յակովբայ). ուր կը դիմեն ամենայն
Արկրէ եւ Ազգէ հաւատացեալ Քրիստոն-
եայք, եւ մեծաւ ջերմեւանդութեամբ երկըր-
պագութիւն կը մատուցանեն Ս. Տեղեաց, ո-
րոնք բարեբաղդաբար դարերէ ՚ի վեր Հայոց
ձեռքն անցած են, եւ անոնց պահպանութիւնն
ու հսկողութիւնը Տիեզերիս չորս կողմը դրա-
նուած բոլոր Հայոց գիտակցութեամբն ու հա-
ւանութեամբը սրբակրօն Հայ Միաբանութե-
մը ձեռքն յանձնուած է, որուն յաջորդութիւ-
նը մինչեւ ցայսօր անմիաս շարունակուած է, եւ
շնորհիւ Ըմենակալին պիտի շարունակուի, ե-
թէ զերծ մնայ կերպ կերպ ներքին թշնամու-
թիւններէ:

Արդարեւ՝ թէ յիշեալ Ս. Տեղեաց տիեզե-
րայոյս փառօքը, եւ թէ զանոնք դարերէ ՚ի վեր
արթուն հսկողութեամբ մը պահպանող, եւ բա-
զում անգամ արտաքին թշնամեաց յարձակման-
ցը դէմ քաջաբար պաշտպան կեցող ու արիւն
թափող այս Սրբակրօն Միաբանութեան ան-
թիւ եւ անուրանալի արդեանց շնորհիւ, այս

օրուան օրս՝ թէ Ս. անքն և թէ համայն Ազգը, բոլոր Ազգաց կողմէն մեծ դովութիւն ու պարծանք ստացած է. և ինչպէս ըսինք, եթէ առանց մէկ փոքրիկ ներքին վնաս մը կրելու անխախտ և հաստատ մնայ յիշեալ Ս. անքը, անտարակոյս Հայ անունը Տիեզերիս վրայ անմահ պիտի մնայ. Եւ յիրաւի (որ Ազգէն որ ըլլայ) Ս. Երուսաղէմ գնացող մէկը, անկարելի բան է որ Ս. Յակովբայ Ս. անքը չի հանդիպի, ու նորա սիրովը չի կապուի. և ի դարձին անոր մեծամեծ գովասանքներ չընէ. որ ինչպէս այս բաները հոն դացող հազարք հազարաց ամեն ատիճանէ անձինք կրնան վիայել, ջրելով այն սակաւթիւ շահաժողով անձանց ինքնահնար զըրպարտութիւնները՝ ընդգէմ ի վնաս սրբոյն Յակովբայ. Այժմիկ նախապէս այսքան բաւական է:

Երկրորդ՝ Երուսաղէմի վանքին Աթոռը ուրիշ Առաջնորդական Աթոռներու չի նմանիր, և անոնց հետ չի բաղդատուիր. զի անոնք (բայ իշխմանայ Ս. Աթոռէն) ժամանակին մէջմէկ առանձին տնտեսներով հաստատուած Գաւառական և Առաջնորդական Աթոռներ են ընդ աստիճանաւ. իսկ Երուսաղէմի Ս. Աթոռը ուրիշ Առաքելական Աթոռներու պէս Առաքելական պատիւ ունի. ըստ որում Ս. անքին մէջն է Տեառն Եղբայր Երդար Առաքելոյն գերեզմանն ու մեր Բեգար Հայոց Թաղաւորէն նըւիրեալ Նորին սեպհական գաղտնակուր փառաւոր Աթոռը. և մեծ Առաքելոյն Յակովբոսի արիւնամած Ս. Գլուխը. Եւ այս Ս. Գլուխուն եղած տեղը կը կոչուի Ս. Գլխադիր՝ ուր տեղ Լատինացիք տարին անգամ մը անոր վրայ ջերմեռանդաբար և հանդիսաւոր կերպիւ Ս. Պատարագ կը մատուցանեն, յարգելով նաև այն Եղբոր Տեառն Գերեզմանն ու այն գեղեցիկ փայլ Աթոռը. Թողումք յիշել հոս այլ և այլ արարողութիւնները, զոր այն օրը Լատինացիք Ս. Յակովբայ գերահրաշ Ս. Տաճարին մէջ կը կատարեն, ի պատիւ Ս. Առաքելոց. Յոյնք ևս բանիւ կ'ընդունին այս բաները, և կը մեծարեն այս Ս. Աթոռս, բայց արդեամբ Լատինացւոց ըրածին չեն հետեւիր. և այս ալ ինչու համար է նէ ամենուն յայտնի է. հարկ չէ մեզ խորհրդածել:

Պարծեմք այսքանով բաւական է հաստատել թէ՛ Երուսաղէմի Աթոռը է Առաքելական և ոչ Առաջնորդական. քանզի տեղ մը լսուած բան

չէ որ Լատինացիք Հայոց եկեղեցիներու մէջ այս կերպ գործ մը կատարած ըլլան, որ ինչպէս կը կատարեն այս սուրբ Տաճարին մէջ, և կամ մէկ ուրիշ Հայկական Ս. Տեղի մը այսքան յարգութիւն ու պատիւ տուած ըլլան, որն որ կուտան Ս. Յակովբեան Աթոռին:

Հիմայ հոս մեզի բարեփրաց կողմէն հարցունելու ըլլայ թէ՛ ո՞ւր է այժմ այս Ս. Աթոռը, և կամ ո՞ւր կը կատարուին օտարազգիի մը կողմէն այն Ս. պաշտամունքները. Աթոռը այժմ ըստ վերոյիշեալ Հայ օրագրաց և Թեաղրողաց՝ (ողբալով կ'ըսեմք) «այս աւագակաց, մարդասպանութեան գործարան, անօրէնութեանց բնակարան, ստութեանց ու խարդախութեանց կեդրոն, և այլն և այլն» համարուած Երուսաղէմի Հայոց Ս. անքին մէջն է, և այն պաշտամունքները որ կը կատարուին. նոյն տեղւոյն Պատրիարքի ընտրութեան համար այս անգամ կատարուած խորհրդաւորութեան (Ս. Գլխադիրին) տեղն է. Ափսոս խղանելու, կարմրելու, ըստ ոմանց բաժնորդաւորութեան, և ըստ մեզ երեսնիս սև գիմակ մը անցունելու բան...

Ահա ասոնք այսպէս անժխտելի կերպիւ պաշտոյցեալ ճշմարտութիւններ ըլլալով, կարծեմք մեր առջի ըրած ծանր խօսքերը ասոնցմով ըստ բաւականի կը թեթեւան. և ասանկով Ս. Երուսաղէմի արդի խնդրոյն վրայօք յիշեալ Թեաղրողաց խրատներն ու Հայ օրագրաց զրածները դատապարտելի, և իրենք զիրենք միլիոնաւոր Քրիստոսասէր Հայ Ժողովուրեան դիմաց ստուգապէս մէջ դրուելու արժանի ձգած ըլլանք կը հաստատուի. Ես նք այսպէս խորհելով կը սխալեմք արդեօք, և կամ ծանր խօսք մը ըսած կ'ըլլամք, երբ այն բաղում փառաւորեալ Ս. Յակովբայ Ս. անքին դռան ճակատը (Ժողով Քրիստոսինը Քրիստոսին, Առաքեալինը Առաքեալին) 4—5 միլիոն Հայոց պատիւն ու իրաւունքը դրոշմուած ըլլալով՝ այսօրգանոնք մէկ քանի օրագրաց և Թեաղրողաց ձեռօքը վար առնուած, անոնց ոտիցը ներքեւ անինայ ճնշուած կը տեսնուին. Ցաւելու և ողբալու վիճակ:

Բայց գուցէ կարելի է այն Թեաղրողները զիրենք այսպիսի պատասխանատուութեան մը ազատելու, և նորէն այն օրագրաց պաշտպանութիւն ընելու դիտմամբ՝ մեր ըսածներուն դէմ

Պատրիարքին անունը : Պուլցե հարցունէք թէ ե՞րբ , ո՞ր ատեն Ե. յո՛ւ, ատենը չի գիտնալ նիդ կարելի է ճշմարիտ ըլլայ . բայց ըստ մեզ այսուհետեւ երբ ալ ըլլայ , ուր ալ ըլլայ , կարծեմք այս անունը լսած ժամանակնիդ՝ նոյն հետայն ականջնիդ խօսելով չի լսել հարկ կ'ըլլայ . ուրովհետեւ վեց ամիսէ 'ի վեր՝ մահաւանդ սա վերջին օրերը այս անուան վրայօք առանց հետեանքը խորհելու այն կերպ գէշ վարմունքներու դիմեցիք , և այնքան նախառնքներ կուտակեցիք յիշեալ անուան փառացը ներքեւ փառաւորեալ Միաբանութեան վրայ , որ ասկէ ետքը ներքեւ և արդարեւ հոն Պատրիարքով ալ որ ըլլայ . . . 'ի հարկէ Եփրեմեոս , Լաւրենտիոս գլուխ պիտի համարուի ձեզի պէս ապագան քաջ խելոյ իւրացի Դաւիթներու առջին :

Ի վերջոյ խօսքերնիս կ'ըսեմք , ահա Ա՛նք , ահա Եթոռ , և ահա Միաբանութիւն . նա և ահա այս բարոյապէս միացեալ երեք բանիս վրայօք մեր կողմէն արուած մէկ մէկ քանի վերոյիշեալ բացատրութիւնները : Աստի այսուհետեւ նորանոր այս երեքէն որին վրայ որ կուզէք և կը կամիք ձեր նախատական ու անարգական շանթերը արձրկելու նէ մի կայնիք , փութանակի արձրկեցէք . և առանց դադարելու նայեցէք որ շարժումնիդ աւելի սաստկացնէք , փոխանակ սակաւիկ մի մեղմացնելու : Բայց և այնպէս ինչ որ ալ ընէք , Ձեր այդ գործողութիւններուն մէջ սա կէտը միշտ մաքերնուի մէջ ըմբռնեցէք , այսինքն թէ՛ երբ այն (Ա՛նք , Եթոռ , Միաբանութիւն) երեքէն մէկը որն որ ըլլայ՝ դուք յանկուարի կը նախատէք , Եղիշ խիստ մեծ մասը ըստ օրինի կը պատուէ , դուք կ'անարգէք , անոնք կը մեծարեն , դուք կը զրկարտէք , անոնք կը պաշտպանեն , դուք 'ի հարկէ նպատակաւ մը Պատրիարքը դուրսէն կ'ուզէք , անոնք իրաւանց համաձայն ներսէն կ'ուզեն , դուք ըստ Ըստուածային ձայնի ընտրուած Իսահակ Արդապետին Պատրիարքութիւնը ձեր կրիքը զոհել կ'ուզէք , իսկ անոնք լուսավայլ և կենդանի հաւատքով մը այս ընտրութեան Ըստուածային ազդուութեամբ ըլլալը ընդունելով անպատշաճ 'ի գործ դրուիլը կը պահանջեն . վերջապէս դուք ուրիշ կերպ կը խորհիք , անոնք ուրիշ կերպ կը խորհին : Երբ այս երկու հակառակութեանց հետեւանք . Եհա մէկ մեծ ըստ իմաստնոյ՝ նախ խորհելու , մտածելու , և ապա 'ի գործ դնելու խնդիր մը , բայց աս խնդրոյն վրայ խորհողն ով է , կամ խորհելով 'ի գործ չի դնողն ով է : Եհա աս բանիս վրայօք մեր դիտողութիւնները՝ օրագրոյս յառաջիկայ թրւոյն մէջ 'ի գործ պիտի դնեմք , եթէ մինչև այն ատեն խնդիրը չի լուծուի :

ՄԵՂՈՒ ՄԻԻՆԸՏԻ

ԵՒ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ ՆՈՑՈՒՆՑ

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ԽՆԴՐՈՅՆ ՆԿԱՏՄԱՍԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱՅ ԱՐԴԻ ԳՐՈՒԹԵԱՆՅԸ ՎՐԱՅ

Բարկանանք՝ բայց
չի մեղանչենք :

Առանց նեղանալու
զու գուարճանանք :

Այս միջոցիս Մեղուն և Միանալին երուսաղիմայ խնդիրը առիք բռնած՝ նորանոր իրենց բնական հանճարները՝ որք են , անխնդիրներն , անխելքութիւն , (կերպիս մը անկրօնութիւն) ազգատեցութիւն , շահապաշտութիւն , կողմնասիրութիւն , շողորքորութիւն , աւելորդախօսութիւն , սնոտխաբանութիւն , հմայութիւն , որումնացանութիւն , քութիւն , զրգոտութիւն , խաբէութիւն , խարդախութիւն , ստաբանութիւն , գրպարտութիւն , երեսպաշտութիւն , որ է մարդանաւորութիւն , ապերախտութիւն , ինքնահաւանութիւն , տմարդութիւն , վատարութիւն , խեղկատակութիւն , տիտայաբանութիւն , ու միմտաբանութիւն , և այլն , և այլն . սաստկապէս 'ի գործ կը դնեն , որ ինչպէս այս օրերս հետզհետեւ հրատարակուած գրութիւններուն մէջ այս բաները լուսավայլ կերպիս կը տեսնուին :

Այն կը տեսնուին անոնց մէջ՝ Ազգին Կրօնքն ու Աւանդութիւնները այլալուծուած , ընդհանուր Ազգե նախատուած , Ազգին Սրբազան Պատրիարքը բամբաստուած , յակակն յանդուհանձն Պատուական եպիսկոպոսաց , Վարդապետաց , և համօրին եկեղեցականաց Քահանայական փառքն ու պատիւը անարգուած , պատուաւոր նմիրայից և առաքինի անհատից յարգը ոտքի տակ առնուած : Այս կը տեսնուին անոնց մէջ՝ անմեղը մեղաւոր , արգարը յանցաւոր վճռուած , արժանաւորը անարժան դատուած , Ազգին աշխատաւոր , պիտանի եւ բարեբար անձինքները՝ անպիտան , անօգուտ , վնասակար եւ չար մարդիկ համարուած : Վերջապէս նոյն գրութեանց մէջ պայծառ կը տեսնուին՝ արդարութիւնը յանիրաւութեան , ճշմարտութիւնը 'ի սուտութեան , ուղիւնը 'ի բիրտութեան , ներդոյնիւնը յանձնոր-

այն վառը բոլորովին վերցուելով, ալ ամեն բան խաղը ու պատառ յայտնի խօսուիլ սկսաւ, 'ի նախատինա եւ յանաքանա Ազգին:

Այն անձը ընտանեւս է, որն որ միշտ կը մեծարէ իր ընտանիքը, ծածկելով 'ի յօտարաց անոնց հազար ու մեկ պակասութիւնները, միանգամայն ուղղելով զանոնք իր մէջը:

Ասոր հակառակ վատ է այն մարդը, որ իր ընտանիքը չը սիրելուն 'ի իրկուան տանը չորս պատին մէջ եղածները' առաւօտուն (իբր քէ ընտանիքէն երվելով) հրապարակի կը հանէ, 'ի յուր ամենայն եւ խառն բազմութեան:

Անաւասիկ սոյն օրինակ է Ազգի մը համար ալ: Բանը Ազգասիրութեան եւ ազգատեցութեան վերայ է:

Այս օրուան օրս բոլոր աշխարհի իրաւագէտ եւ քաղաքավար մարդիկը, ասոնք այսպէս ճանչցեր, ընդունել եւ այսպէս ալ կը քարոզեն: Ուստի մեծապէս կը սխալին ամեն անոնք, որոնք կարծեաց ազատութիւն ըսելով՝ Ազգի մը դէմ հրապարակի բերնի եկածը ավելցփեղ խօսելու գրեթէ արտօնութիւն կը շնորհեն:

Չէն լսեր, չէն տեսներ այն մարդիկը Եւրոպացւոց օրէնքը, որ Ազգ մեծարողը մեծարելի է Ազգին ամբողջութենէն, եւ մեծ պատիւ է իրենց մէջ Ազգ սիրելը ու մեծարելը. եւ ասոր փոխարէն չէն գիտեր քէ օտարաց առջին Ազգ նախատողին գլխուն ինչ շանքեր կարճըկեն, սոյն Եւրոպացիք, եւ կարծեմք այնպիսին միջեւ անգամ չէ միայն ազգութենէն կը գրկեն. այլ բոլորովին իրենց երկրէն դուրս կը վաւորեն:

Այո, բնական է նաեւ այս, որ իւր ընտանիքը սիրողը սիրելի է ընտանեացը, ինչպէս Աբէլ. նոյնպէս ատելի է ընտանիքը ատողը իր ընտանիքէն, ինչպէս Կայէն:

Առաջինը օրհնեալ, երկրորդը անիծեալ: Նմանապէս Ազգ սիրողը սիրելի է եւ հարազատ Ազգին ընդհանութիւն՝ որպէս Հայկ. սոյնպէս ատելի է ապստամբ է Ազգին լրութեան այն, որ իր Ազգը կատէ, եւ անկէ կ'ապստամբի որպէս Բէյ:

Մինչեւ հոս այս խորհրդածութիւնները ընդհանրապէս ընելեւս վերջը՝ բուն մտքերնիս պարզեմք:

Յայտնի է քէ Հայ օրագրութիւնը քանի մը տարիէ 'ի վեր պայծառ յաջողութիւններով ըստ կարի կատարեալ եւ կենդանի մարմին մը ստացաւ. եւ այս մարմինը 'ի հարկէ Ազգին փառացն ու պատուոյն համեմատ ծառայութիւն մը պիտի մատուցա-

նէր, եւ անոր պայծառութեանն ու յառաջադիմութեանը նպաստելու ընթացքի մը պիտի հետեւէր: Բայց ամիսն, որքն մտքէն կ'անցնէր՝ Ազգին կարը ծծելով կենդանութիւն ստացող այն մարմնոյն մեկ քանի անգամը՝ ասանկ ատեն մը իր կազմութենէն ապստամբելով ինքնագլուխ մարմին մը ձեւացած՝ իբրեւ Եղովբեան օձ մը իւր բարերար Ազգին վրայ յարձակելով՝ անոր գլխուն սոսկալի հարուածներ իջեցուցած՝ անոր վսեմ փառքն ու պատիւը անձնական շահերու անգութաբար գոհեր. անոր անմեղ անուան ու սրբութիւնը 'ի հրապարակ չարաչար պղծեր, եւ 'ի վախճանի զայն օտարաց բամբասանացը ենթակայ ընէր:

Այո ո՞վ կրնար երեսակայել քէ՝ բնականաբար մարդկային Ազգին մեղը նուիրող Մեղուն, Հայ սերունդին լոկ խայրոցը պիտի ընծայէր:

Ո՞վ կրնար գուշակել քէ՝ առաջները Ազգին սէր, խաղաղութիւն քարոզող Մոսկէտիկը՝ Ետքէն Ազգը դէպ 'ի խռովութեան, եւ անոր մեկ մասը ապշտամբութեան պիտի հրաւիրէր . . . :

Հրաւիրեցին, ընծայեցին, ապերախտութիւն ըրին, բամբասեցին, նախատեցին, անարգեցին, ապշտամբեցան, չար խօսեցան, եւ ասոնցմով Ազգը բարոյապէս մեռցնէլ ուղեցին՝ մոռնալով անկէ ընդունած բիւրաւոր բարիքներն, եւ վայելած շնորհումներն. եւ այս բաները անգգայաբար, յաւետ Յողայաբար ուրանալով զինքը 'ի տարապարտուց ատեցին, եւ դեռ այժմ չափն անցուցած սաստկաբար կ'ատեն. եւ ահա աներկբայ զիտցած ըլլան որ իրենք ալ անոր ամբողջութեանը առջին ատելի եղեն իբրեւ Կայէն, ու ատելի են իբրեւ Բէյ. եւ իսպառ ատելի պիտի ըլլան իբրեւ Վասակ: Արդ քանի որ Ազգին ատելի են, նմանապէս մեզի ալ ատելի ըլլալովնին, ահա այս պատճառաւ պարտաւորեալ ենք այս երկու ատելիներուն հրապարակաւ Ազգին եւ անոր ազնիւ անհատներուն դէմ վատաբար ըսածներն ու գրածները ըստ կարի ետ մղելու: Ուրեմն հոս խորհրդածութեանս վերջ տալով՝ դառնամք մեր վերոյիշեալ պարզաբանութեանը:

Հարունակելի:

Մեր Յուլիս 40 Թուականով ելած Թերթին մէջ խոստացեր էինք Արապիկընէն եկած նամակ մը հրատարակել. ահա այս անգամ անոր ղեկավարութեան արժանի մէկ քանի կտորը միայն քաղելով հոս կը դնեմք. ըստ որում միւս մասերը ուրիշ բաներ կը պարունակեն:

կին վրայ է, որ Մասիսը 494 թուոյն մէջ ըսեր էր թէ «Պ. Չամուրճեանը այս գրութեամբը Այսպատեանին մոլութեանը հակառակ հարաւան մէջ ինկեր է», ուստի կ'ըսէ, «կը յուսամք որ յիշեալ Պատուելին այս աշխարհ վրայէն սրբելու կը փութայ»: Արդ անոր փութալը չի փութալը չի գիտեմք, բայց ըստ մեզ Մասիսն ալ իւր այս խօսքերովը երրորդ մոլութեան մը մէջ կ'ընկնէ, որ կարծեմք ելելը դժուար պիտի ըլլայ: Թող այն ալ աւելի կ'ըսուին խաբար տունապետ Տ. Ներսէս Երեւանի և քաջ Աստուածատեան մասնաւոր Արդարեւ Մասիսը այս մասին անմեղ կը համարեմք, զի պատճառը վերջին փոքր ինչ հասկըցուցինք: Բայց Մեղունի և Միւնատի ընթացքին մօտենալուն համար առ այժմ «Մասիսը այս կողմանէ ալ անմեղ է» չեմք կրնար ըսեր, և 'ի հարկին պէտք եղածը պիտի խօսինք:

—Անցեալները Տառնական խորհուրդը իմաց տուեր էր մեզի թէ՝ օրագրոյս 30րդ թուոյն մէջ յիշուած այն Երամեան Ղազար Պէյին Փրկչային Հիւանդանոցի համար տուած 10 հազար դահեկանը նուէր չըլլալով, նորին կողմէն փոխատուութիւն մըն է եղեր: Որն որ այս օրերը (Փանոսեան Ղազար աղային վկայութեամբ) այն գումարը յիշեալ Պէյին հատուցուեր է:

Ուստի այս մասին ինչ որ գրած էինք վերջին յիշեալ թուոյն մէջ՝ բոլորն ալ ետ կ'առնեմք, գործը իր արդարութեան կշիռը գտնելու համար:

—Մեղուն գրեց թէ՝ Թաքիրտաղի առաջնորդ Թաքէոս Սրբազանը անոր տղուն մը յանձնարելով 60 ցուպ զարկաւ և ինքնին ուլ ալ ոսկրները կտորտեց: Ազգային կառավարութիւնն ալ վճռեց որ յիշեալ Սրբազանը տղուն հօրը խնդրանօքն ու հաւանութեամբը իբրեւ խրատ թեթեւ կերպիւ մը միայնակ 12 ցուպ զարնել տուեր է ըստ տեղւոյն օրինի:

Ասիկայ տեսնելով Փարիզը՝ կրնայ դիւրաւ «էլը Զոլէն» անցնել: Եթէ ասով ալ չի կարենայ՝ թող հրատարակուելու նամակին սպասէ: (Տես Մեղուն թիւ 137): Եւ ասիկայ հազարին մէկն է, օրինակէս բան իմանալով «էլը Զոլէն» անցնելուն ճարը նայէ եղբայր Փարիզ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՆՈՐԱՏԻՊ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

ՎԱՐԴ, ՀԱՆԴԵՍ ՄԵՍՐՈՎՊԵԱՆ

Այս անուամբ Ամազիր մ'ալ հրատարակուեցաւ Յուլիս ամսէ սկսեալ, որուն նպատակը պիտի ըլլայ «իւր սիրելի Ազգայնոցը ծառայութիւն ընել»: Եւ ասոր նիւթերը պիտի ըլլան «Ուսումնական» և Բանասիրական յօդուածներ այսինքն կատակերգութիւններ, դրաբառ և աշխարհաբառ Պատմական ու Բանաստեղծական Վիպասանութիւններ, Ոտանաւորներ, Երգեր, զանազան ազատ թարգմանութիւններ, Բարոյական և Իմաստասիրական խրատներ, Օրհնարձախք, Հանելուկք, և երբեմն Բանախոսութիւնք:

Արդ իւր Յառաջաբանին վերջը ըսած է թէ՝ «Յուսով եմք զի մեր թերութեանցը ներողամիտ պիտի ըլլան սիրելի Ազգայնք, սրտի համոզմամբ գիտելով թէ Վարդ իւր փուշը կուենայ»:

Թող համոզուի հոտանոյշ Վարդ թէ Ազգը ներողամիտ է, և սրտի համոզմամբ գիտէ թէ Վարդը փուշ կ'ունենայ, և ասոր գոհ է, բայց Ազգն ալ իրմէ կը խնդրէ՝ որ չըլլայ թէ՝ իւր տերեւներուն վրայ անմեղը Մեղուններ բնակեցուցանէ. որով իւր հազիւ բացուած կոկոնները, այն զենակար կենդանիներէն անխնայ փետուորելով իր բնական գեղեցկութիւնը շուտով կորսնցունէ. և անանկով, այն նոր ցեղ Մեղուններուն թոյնէն ապականուելով՝ իւր յատկացեալ փուշէն 'ի զատ՝ զինք հոտուրտացող Ազգայնոցը գէշ գէշ հոտեր ալ ընծայէ. ինչպէս ընծայեց իւր ցեղակից Ծաղիկը: Բայց յուսամք թէ Վարդ իւր բնական յատկութիւնը առանց կորսնցնելու՝ մարդկանց առջին ունեցած իւր յարկը միշտ կը պահէ, և պիտի պահէ:

Այժմ կը հրատարակուի Վարդը ամեն ամսուն մէկին քառաձալ թերթով: Տարեկան գինն է 60, վեցամսեայ 35, եռամսեայ 20 դահեկան: Ստորագրութեան տեղերն են Օրթադիւն Վերջնականութեան Թանգարանն ու Վ. Պ. լիս Ռ. Յ. Բիւրքճեան Տպարանը:

Խմբագիր-Տնօրէն
Մ. Գ. ՏԵՅԻՐՄԵՆՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԳԻՒՐԳՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԳԻՆՃԱՆՃԱՐԱՐ